Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը նախապես վճարվել է, սակայան բացակայում է գրավոր միջնորդություն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջների վերաբերյալ, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով կիրառված հայցի ապահովման միջոցին, ցանկանում է նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Հայցը բավարարելու մասին վճռի կայացումից հետո հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ Դատարանի 29.01.2026թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի կատարումը, այնուհետև ենթակա է վերացման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

**Վ Ճ Ռ Ե Ց**

<<ԲԻԴԵՔ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ի՝ <<ԲԻԴԵՔ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Գուրգեն Եղիազարյանի 16.01.2026թ. կայացրած N 01-2026 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել <<ԲԻԴԵՔ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար Գուրգեն Եղիազարյանի 16.01.2026թ. կայացրած N 01-2026 որոշումը:

Դատարանի 29.01.2026թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը, այնուհետև՝ վերացնել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE6F-3578-4552-9130 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։*

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*